ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 19.08.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/57

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ «Հայկ-Շին» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ՝

Ա. Մարտիրոսյանի /լիազորագիր տրված՝ 08.08.2019թ./

Քննելով ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիկի համայնքապետարանի կարիքների համար ներհամայնքային փողոցների ասֆալտապատման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված ԳՎՀ-ՀԲՄԱՇՁԲ-19/1 ծածկագրով հրատապ բաց մրցույթի շրջանակներում «Հայկ-Շին» ՍՊԸ-ի (հետայսու նաև՝ Ընկերությունը) կողմից 02.08.2019թ. ներկայացված և 05.08.2019թ. վարույթ ընդունված բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/57 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Հայկ-Շին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Հայկ-Շին» ՍՊԸ-ն 02.08.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիկի համայնքապետարանի կարիքների համար կազմակերպվել է «ԳՎՀ-ՀԲՄԱՇՁԲ-19/1» ծածկագրով գնման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկա է հանդիսանում ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիկի համայնքապետարանի կարիքների համար ներհամայնքային փողոցների ասֆալտապատման աշխատանքները:

Ընթացակարգին մասնակցության հայտ են ներկայացրել «Հայկ-Շին» ՍՊԸ-ն և «Շանթ-Սեյրանյան» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստը տեղի է ունեցել 12.07.2019թ. ժամը 17:30-ին, որին մասնակցել է «Հայկ-Շին» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչը, ով նիստի ավարտին պահանջել և ստացել է «Շանթ-Սեյրանյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.07.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության 4-րդ կետով արձանագրվել է, որ Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Շանթ-Սեյրանյան» ՍՊԸ-ն, սակայն վերջինիս ներկայացրած գնային առաջարկը ուսումնասիրելիս, պարզվել է, որ հայտի գնային առաջարկում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ գնային առաջարկի 5-րդ սյունակում թվերով և տառերով նշված ընդհանուր գումարները չեն համապատասխանում, թվերով նշված է 206 340 000, իսկ տառերով՝ երկու հարյուր միլիոն երեք հարյուր քառասուն հազար:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.07.2019թ. նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետով արձանագրվել է, որ «Շանթ-Սեյրանյան» ՍՊԸ-ն հայտարարվել է ընտրված մասնակից և նույն արձանագրության 2-րդ կետով որոշում է կայացվել պայմանագիր կնքել վերջինիս հետ:

Ընկերությունը հայտնել է, որ «Շանթ-Սեյրանյան» ՍՊԸ-ի հայտը ենթակա է մերժման, քանի որ գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն և տառերով

կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը չի համապատասխանում ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին:

Ընկերությունը որպես բողոքի իրավական հիմքեր և հիմնավորումներ վկայակոչել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը, Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի «ա», «բ» և «գ» պարբերությունները:

Ընկերությունը նշել է, որ հաշվի առնելով վերոգրյալը, պարզ է դառնում, որ «Շանթ-Սեյրանյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը ենթակա էր մերժման:

Ամփոփելով վերոգրյալը, Ընկերությունը Գնումների հետ կապված բողքներ քննող անձին խնդրել է՝

1. պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 18.07.2019թ. թիվ 3 արձանագրության 4-րդ կետով՝ «Շանթ-Սեյրան» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու մասին կայացրած որոշումը:

2. պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 30.07.2019թ. թիվ 4 արձանագրության 1-ին կետով «Շանթ-Սեյրան» ՍՊԸ-ին ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչելու մասին կայացրած, ինչպես նաև 30.07.2019թ. նիստի թիվ 4 արձանագրության 2-րդ կետով «Շանթ-Սեյրան» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու որոշումները:

3. պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում «Շանթ-Սեյրան» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու վերաբերյալ:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 08.08.2019թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. <u>ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիկի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիկի համայնքապետարանը (հետայսու նաև՝ Պատվիրատու) 12.08.2019թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է

ներկայացրել «ԳՎՀ-ՀԲՄԱՇՁԲ-19/1» ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 08.08.2019թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2019/57 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲՔԱ-ՆԳ-2019/57 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիկի համայնքապետարանի կարիքների համար ներհամայնքային փողոցների ասֆալտապատման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված ԳՎՀ-ՀԲՄԱՇՁԲ-19/1 ծածկագրով հրատապ բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Շանթ-Սեյրան» ՍՊԸ-ն:

2. Շանթ-Սեյրան» ՍՊԸ-ն հայտի թիվ 2 հավելվածով 1-ին չափաբաժնի մասով ներկայացրել է գնային առաջարկ հետևյալ ձևով.

Չափա-բաժինների համարները	**Աշխատանքի անվանումը**	**Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/**	**ԱԱՀ** /տառերով և թվերով/**	**Ընդհանուր գինը /տառերով և թվերով/**
1	***2***	***3***	***4***	***5=3+4***
1	ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիկ համայնքի ներհամայնքային փողոցների ասֆալտապատման աշխատանքներ	(մեկ հարյուր յոթանասունմեկ միլիոն ինը հարյուր հիսուն հազար) 171 950 000	(երեսունչորս միլիոն երեք հարյուր իննսուն հազար) 34 390 000	(երկու հարյուր միլիոն երեք հարյուր քառասուն հազար) 206 340 000

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.07.2019թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով «Շանթ-Սեյրան» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից, որին որոշվել է

ծանուցել՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը նեկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Հայկ-Շին» ՍՊԸ-ի 02.08.2019թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, ԳՎՀ-ՀԲՄԱՇՁԲ-19/1 ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերը, գործով առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ***ոչ խտրական հիմունքներով կազմակերպում***.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ***գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:***

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: ***Հայտը ներառում է մասնակցի հաստատած գնային առաջարկը***:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ***եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա <u>հիմք է ընդունվում տառերով գրված գումարը:</u>*** Եթե առաջարկվող գները ներկայացված են երկու կամ ավելի

արժույթներով, ապա դրանք համեմատվում են Հայաստանի Հանրապետության դրամով՝ հրավերով սահմանված փոխարժեքով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ մասի «ա», «բ» և «գ» պարբերություններով սահմանվում է, որ մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

ա. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և տառերով և թվերով կամ միայն տառերով,

բ. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին.

գ. մասնակցի գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված:

Կարգի 40-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝ հայտերի բացման նիստում՝

3. հանձնաժողովի նախագահը ***հայտարարում է հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, <u>հիմք ընդունելով տառերով գրվածը</u>***.

4. ***հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում*** բացակայում են ***գնային առաջարկը*** և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ***ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:*** Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետը սահմանում է, որ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ***<u>բացառությամբ</u>***

<u>այն դեպքերի, երբ</u> հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ ***<u>գնային առաջարկը</u>***, կամ հայտի ապահովումը ***<u>ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան</u>***, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիկի համայնքապետարանի կարիքների համար ներհամայնքային փողոցների ասֆալտապատման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ԳՎՀ-ՀԲՄԱՇՁԲ-19/1 ծածկագրով հրատապ բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Շանթ-Սեյրան» ՍՊԸ-ն:

«Շանթ-Սեյրան» ՍՊԸ-ն հայտի թիվ 2 հավելվածով 1-ին չափաբաժնի մասով ներկայացրել է գնային առաջարկ հետևյալ ձևով.

Չափա-բաժինների համարները	**Աշխատանքի անվանումը**	**Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/**	**ԱԱՀ** /տառերով և թվերով/**	**Ընդհանուր գինը /տառերով և թվերով/**
1	***2***	***3***	***4***	***5=3+4***
1	ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիկ համայնքի ներհամայնքային փողոցների ասֆալտապատման աշխատանքներ	(մեկ հարյուր յոթանասունմեկ միլիոն ինը հարյուր հիսուն հազար) 171 950 000	(երեսունչորս միլիոն երեք հարյուր իննսուն հազար) 34 390 000	(**<u>երկու հարյուր միլիոն երեք հարյուր քառասուն հազար</u>**) 206 340 000

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.07.2019թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով «Շանթ-Սեյրան» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից, որին որոշվել է ծանուցել՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ուսումնասիրելով «Շանթ-Սեյրան» ՍՊԸ-ի հայտի թիվ 2 հավելվածով ներկայացված գնային առաջարկը, արձանագրում եմ, որ վերջինիս կողմից ներկայացված գնային

առաջարկի 5-րդ սյունակում առկա է անհամապատասխանություն տառերով և թվերով գրված գումարների միջև, մասնավորապես՝ գնային առաջարկի մեջ «ընդհանուր գինը» 5-րդ սյունակում նշված գումարը, որը հաշվարկվում է 5=3+4 (ընդհանուր գինը=արժեք+ԱԱՀ) բանաձևով, ***տառերով նշվել է <u>երկու հարյուր միլիոն երեք հարյուր քառասուն հազար</u>, մինչդեռ՝ արժեքի և ավելացված արժեքի հարկի հանրագումարը՝ կազմում է <u>206 340 000 ՀՀ դրամ</u>***:

Այսպես՝ Կարգի 40-րդ կետի 3-րդ ենթակետը սահմանում է, որ հայտերի բացման նիստում հանձնաժողովի նախագահը ***հայտարարում է հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, <u>հիմք ընդունելով տառերով գրվածը</u>***:

Միաժամանակ Օրենքի 34-րդ հոդվածի հոդվածի 4-րդ մասի սահմանում է, որ ***եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա <u>հիմք է ընդունվում տառերով գրված գումարը:</u>***

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը սահմանում է, որ ***<u>հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում</u>*** բացակայում են ***<u>գնային առաջարկը</u>*** և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ***<u>ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:</u>***

Այսպիսով, հաշվի առնելով վերը նշված իրավական կարգավորումները, գտնում եմ, որ Ընկերության հայտը հայտերի բացման նիստում ենթակա էր մերժման, քանի որ օրենսդիրը հստակ սահմանում է, որ եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը, մինչդեռ Ընկերության կողմից հայտի թիվ 2 հավելվածով ներկայացված գնային առաջարկի ընդհանուր գնի տառերով նշված գումարը չի համապատասխանում արժեքի և ավելացված արժեքի հարկի հանրագումարին. սխալ է գրված:

Միաժամանակ վերը նշված նորմերը հստակ սահմանում են, որ այն դեպքում, երբ գնային առաջարկը չի համապատասխանում հրավերի պահանջներին, ապա այն ենթակա է մերժման և տվյալ դեպքում Կարգի 41-րդ կետով նախատեսված շտկման հնարավորությունը չի գործում:

Այսպիսով՝ նման պայմաններում արձանագրում եմ, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հայտերի բացման նիստում բավարար գնահատելով «Շանթ-Սեյրան» ՍՊԸ-ի հայտը, գործել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված

պահանջների խախտմամբ, հետևաբար գտնում եմ, որ «Հայկ-Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Հայկ-Շին» ՍՊԸ-ի կողմից 02.08.2019թ. ներկայացված բողոքը բավարարել մասնակի, մասնավորապես՝

1. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 18.07.2019թ. թիվ 3 արձանագրության 4-րդ կետով՝ «Շանթ-Սեյրան» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու մասին որոշումը:

2. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 30.07.2019թ. թիվ 4 արձանագրության 1-ին կետով «Շանթ-Սեյրան» ՍՊԸ-ին ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչելու, ինչպես նաև 30.07.2019թ. նիստի թիվ 4 արձանագրության 2-րդ կետով «Շանթ-Սեյրան» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու մասին որոշումները:

3. Բողոքի պահանջը՝ պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում «Շանթ-Սեյրան» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու վերաբերյալ, մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**